Մրցույթ՝ «ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի N 1 միջն. դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկա (8 դասաժամ) , իմ հայրենիքը և աշխարհը (2 դասաժամ) , իմ հայրենիքը (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. դեկտեմբերի 2-ից մինչև դեկտեմբերի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 17:00-ը, բացի կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. դեկտեմբերի 18-ին՝ ժամը 12:00-ին**, Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշեն գյուղի Ա. Եղիազարյանի անվան N2 միջնակարգ դպրոցում, հասցե՝ Գեղարքունիքի մարզ գ. Ներքին Գետաշեն, Վերին Դեմեր թաղամաս, 1-ին փողոց 1-ին շենք :

Տեղեկությունների համար զանգահարել 094 70 70 59 հեռախոսահամարով: